ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

«ՀՀԿԳՄՆԲՄԱՇՁԲ-25/3» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգով ընդհանուր շինարարական աշխատանքների (Սիսավանի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.05.2025թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաճողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Մկրտչյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Ամալյա Դավթյան /գնահատող/
	Ցոլակ Հակոբյան /գնահատող/
	Հովսեփ Գրիգորյան /բացող/
	Էլեն Ստեփանյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 «ՀՀԿԳՄՆԲՄԱՇՁԲ-25/3» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀԿԳՄՆԲՄԱՇՁԲ-25/3» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«ՍԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ, «ԳԱԶՇԻՆ ՄՁ» ՍՊԸ, «ՀԻԴՐՈ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «ՍՈՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ կոնսորցիում	sagroup@internet.ru
2	«Բիդեք» ՍՊԸ	bedeck.llc@mail.ru
3	«Պրոմ Գրուպ» ՍՊԸ և «Սիգմա-Տել» ՍՊԸ կոնսորցիում	aregsedrakyan@mail.ru
4	«ԶՈՎԵՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ	gnumner@zover.am
5	«ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ	gepotaniq66@gmail.com
6	«ԱՌԱՆՆԱ ՇԻՆ» ՍՊԸ, «ԲԱՂՐԱՄՅԱՆ ՇԻՆ» ԲԲԸ և «ՆՈՅ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ կոնսորցիում	novelmasiv@gmail.com
7	«Մեծն Էրիկ» ՍՊԸ	metsnerik@yandex.ru

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Մասնակիցների առաջարկած գինը.

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները													
		«ՍԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ		«Բիդեք» ՍՊԸ		«Պրոմ Գրուպ» ՍՊԸ		«ՁՈՎԵՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ		«ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ		«ԱՌԱՆՆԱ ՇԻՆ» ՍՊԸ		«Մեծն Էրիկ» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ													
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	1814563230	1209708820	1451650584	1270166000	1524199200	1315555000	1578666000	1360922416.67	1633106900	1419895725	1703874870	1435000000	1722000000	1497014665	1796417598

5. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

5.1 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետով սահմանված ժամկետում, ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3,Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 27.05.2025թ. ժամը 15:00-ին

Բացակայում է՝ Ամալյա Դավթյանը

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 **«Բիդեք» ՍՊԸ-ի, «ՁՈՎԵՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի և «ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ**-ի հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

6.2 **«ՍԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ, «ԳԱՋՇԻՆ ՄՁ» ՍՊԸ, «ՀԻԴՐՈ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «ՍՈՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ կոնսորցիումի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության մեջ «ՀԻԴՐՈ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը ժամկետանց է:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

6.3 **«Պրոմ Գրուպ» ՍՊԸ և «Սիգմա–Տել» ՍՊԸ կոնսորցիումի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

1) Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության մեջ «Պրոմ Գրուպ» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը ժամկետանց է:

2) «Պրոմ Գրուպ» ՍՊԸ և Սիգմա-Տել» ՍՊԸ կոնսորցիումի պայմանագրում հղում է արված նաև Գործընկեր-3-ի, որը պայմանագրի կողմ չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

6.4 **«Մեծն Էրիկ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության մեջ մասնակցի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը ժամկետանց է:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

6.5 **«ԱՌԱՆՆԱ ՇԻՆ» ՍՊԸ, «ԲԱՂՐԱՄՅԱՆ ՇԻՆ» ԲԲԸ և «ՆՈՅ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ կոնսորցիումի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

1) «CLIENT-TREASURY» համակարգով մասնակցի հայտի ապահովման իսկությունը ստուգելու արդյունքում պարզվել է, որ **«ԱՌԱՆՆԱ ՇԻՆ» ՍՊԸ**-ի կողմից 12.05.2025թ.-ին «Արդշինբանկ» ՓԲԸ միջոցով կանխիկ փողի ձևով վճարված գումարը գանձապետական համակարգում առկա չէ, ինչով պայմանավորված՝ մասնակցի հայտով ներկայացված հայտի ապահովումը գնահատվում է իրականությանը չհամապատասխանող, հետևաբար նաև հրավերի պայմաններին չհամապատասխանող, ինչը շտկման ենթակա չէ:

2) Բացակայում է **«ԲԱՂՐԱՄՅԱՆ ՇԻՆ» ԲԲԸ-ի** կողմից **Հայկ Ղազարյանին** հայտը ստորագրելու լիազորությունը վերապահելու մասին փաստաթուղթը (լիազորագիր):

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«ՍԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ, «ԳԱՋՇԻՆ ՄՁ» ՍՊԸ, «ՀԻԴՐՈ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «ՍՈՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ կոնսորցիումի**ն, **«Պրոմ Գրուպ» ՍՊԸ և «Սիգմա–Տել» ՍՊԸ կոնսորցիումի**ն և **«Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի**ն մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.2, 6.3 և 6.4 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից սահմանված ժամկետում շտկելուց հետո՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 04.06.2025թ. ժամը 15:00-ին

Բացակայում է՝ Ամալյա Դավթյանը

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են հանձնաժողովի կողմից 6.2, 6.3 և 6.4 կետերով արձանագրված անհամապատասխանությունները և շտկված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

9. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին տեղ զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել «ՍԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԷԼԻՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ, «ԳԱՋՇԻՆ ՄՁ» ՍՊԸ, «ՀԻԴՐՈ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «ՍՈՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ կոնսորցիումին,

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Բիդեք» ՍՊԸ-ին,

3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Պրոմ Գրուպ» ՍՊԸ և «Սիգմա–Տել» ՍՊԸ կոնսորցիումին,

4-րդ տեղ զաղեցրած մասնակից ճանաչել «ՋՈՎԵՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին,

5-րդ տեղ զաղեցրած մասնակից ճանաչել «ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ-ին,

6-րդ տեղ զաղեցրած մասնակից ճանաչել «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

9.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և սույն արձանագրության 6.5 կետը՝ «ԱՌԱՆՆԱ ՇԻՆ» ՍՊԸ, «ԲԱՂՐԱՄՅԱՆ ՇԻՆ» ԲԲԸ և «ՆՈՅ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ կոնսորցիումի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին էլեկտրոնային ձևով ՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Մկրտչյան /նախագահ/

_____ Ցոլակ Հակոբյան

_____ Հովսեփ Գրիգորյան

_____ Էլեն Ստեփանյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/